ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«25» 11 2016թ.
N 89

ՀՀ Լոռու մարզպետ
Ա.Նալբանդյանին

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ավագանու թիվ 21-Ն որոշումը՝համաձայն հավելվածների, թիվ 22 որոշումը՝ համաձայն հավելվածի, թիվ 23 որոշումը, թիվ 24-Ն որոշումը՝համաձայն հավելվածի, թիվ 25 որոշումը՝համաձայն հավելվածի, համայնքի ղեկավարի 02-Ա, 03 կարգադրությունները, համայնքի ղեկավարի թիվ 16,17 որոշումները::

Առդիր՝ 16 /տասնվեց/թերթ:

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 21-Ն

«22» նոյեմբերի 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, Շենական համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենական համայնքի 2017թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածների:

Ավագանու անդամներ
կողմ՝

Ի. Դունամալյան
Ս.Կարապետյան
Գ. Մովսիսյան
Հ. Միրզոյան
Պ.Կարապետյան

դեմ՝ 0 (զրո)

ձեռն.՝ 0 (զրո)

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 22

«22» նոյեմբեր 2016թ.

ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ, 72-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1. *Հաստատել Շենավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:*
2. *Ուժը կորցրած ճանաչել Շենավան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 19-Ա որոշումը՝ համայնքի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:*
3. *Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:*

Ավագանու անդամներ
կողմ՝

Ի. Դունամալյան
Ս.Կարապետյան
Գ. Մովսիսյան
Հ. Միրզոյան
Պ.Կարապետյան

դեմ՝ 0 (զրո)

ձեռն՝ 0 (զրո

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

Հավելված
Շենավան համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 22-ի, թիվ 22 որոշման

ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 6 (վեց)
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	190.000
Աշխատակազմի քարտուղար	1	95.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	90.000
Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	79.000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Փականագործ	1	73.000
Հավաքարար	1	73.000

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 23

« 22 » նոյեմբերի 2016թ.

ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝

Շենավան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Շենավան համայնքի սեփականության ամենամյա ապրանքանյութական արժեքների գույքագրման փաստաթղթերը:

Ավագանու անդամներ կողմ՝

Ի Դունամալյան

Գ. Մովսիսյան

Ս.Կարապետյան

Պ.Կարապետյան

Հ.Միրզոյան

դեմ՝ 0 (զրո)

ձեռն՝ 0 (զրո)

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2016 թ. N 24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Շենավան գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան գյուղական համայնքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Ս.Կարապետյան			
Գ. Մովսիսյան			
Ի. Դունամալյան			
Պ.Կարապետյան			
Հ.Միրզոյան			

Համայնքի ղեկավար՝ _____ / Գ. Դունամալյան /

2016թ. նոյեմբերի 22
գ. Շենավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան գյուղական համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 22-ի թիվ 24-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ) սույն կետի ,աե ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 90 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 4000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 2000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,աե ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար

սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 4000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000-դրամ.

գ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30000դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70 000դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 300 000դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 800 000դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 120 000 դրամ:

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ) մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2 000 դրամ:

10.. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ:

11. Համայնքի տարածքում տեղական **ինքնակառավարման** մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 3000 դրամ:

12.Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 2000դրամ:

Համայնքի ղեկավար՝ / Գ. Դունամալյան /

22 նոյեմբերի 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 25

«22» նոյեմբերի 2016թ.

ՀԱՄԱՅՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Շենավան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 20-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումներ քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Շենավան համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝ Գ.Մովսիսյան
կողմ՝ Հ.Միրզոյան
Պ.Կարապետյան
Ի.Դունամալյան
Ս.Կարապետյան

Դեմ՝ 0 (զրո)
Ձեռն.՝ 0(զրո)

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Շենավան համայնքի ավագանու
2016 թվականի 22 նոյեմբերի №25 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ա/4729 հոդվածից.
1.Կարապետյան Արման Անդրուշի-10000/տաս հազար/դրամ
2.Դունամալյան Ժիրայր Սամվելի-10000/տաս հազար/դրամ
3.Դունամալյան Պարգև Կոլյայի-10000/տաս հազար/դրամ
4.Դունամալյան Լաուրա Կնյազի-10000/տաս հազար/դրամ
5. Դունամալյան Վալերիկ Սերյոժայի-20000/քսան հազար/դրամ
6.Միրզոյան Հրայր Հովհաննեսի-10000/տաս հազար/դրամ
7.Ամրոյան Սամվել Սերյոժայի-20000/քսան հազար/դրամ
8.Գասպարյան Ջուլիետա Երվանդի-10000/տաս հազար/դրամ

Ընդամենը՝ 100.000/հարյուր հազար/ դրամ:

Շենավանի
համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կ.Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնք,
գ. Շենավան , հեռ. (077)118012

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«11» նոյեմբերի 2016 N 02-Ա

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարմա մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով,կարգադրում եմ՝

1. Շենավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման նպատակով կազմել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Գ. Դունամալյան - հանձնաժողովի նախագահ
Վ.Աբրահամյան- հանձնաժողովի անդամ
Գ. Աթիկյան - հանձնաժողովի անդամ
Ն.Աբրահամյան - հանձնաժողովի անդամ
Գ.Մովսիսյան - հանձնաժողովի անդամ

2. Հանձնաժողովին՝ գույքագրումն անցկացնել սույն թվականի նոյեմբերի 11-ից 21-ը ընկած ժամանակահատվածում և գույքագրման փաստաթղթերը ներկայացնել ավագանու հաստատմանը:

3.Ուժը կորցրած ճանաչել Շենավան համայնքի ղեկավարի 16.11.2015թ.-ի թիվ 07-Ա կարգադրությունը:

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

2016 թ. նոյեմբերի 11
գ. Շենավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 03

«25» նոյեմբերի 2016թ.

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աշխատանքային օրենսգրքի» 159, 161-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 11.08.2005 թվականի 1384-Ն որոշմամբ՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

Սույն թվականի դեկտեմբերի 1-ին Շենավան համայնքի ղեկավար Գարուշ Դունամալյանին տրամադրել 2016 թվականի նվազագույն և լրացուցիչ հերթական արձակուրդը՝ 24 աշխատանքային օր: Աշխատանքի ներկայանալ 11.01.2017թ.;

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«22» նոյեմբերի 2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շենավան համայնքի ավագանու 2016թ.-ի նոյեմբերի 22-ի թիվ 20-Ա որոշումը.

1.Հաստատել Շենավան համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը.

Գարուշ Դունամալյան-համայնքի ղեկավար

Անուշ Խաչատրյան-մարզպետարանի ներկայացուցիչ

Դավիթ Թամարյան-մարզպետարանի ներկայացուցիչ

Վարդան Բաղդասարյան-մարզպետարանի ներկայացուցիչ

Հ. Միրզոյան-ավագանու անդամ

Գ. Մովսիսյան-ավագանու անդամ

Պ.Կարապետյան-ավագանու անդամ

2. Ուժը կորցրած ճանաչել Շենավան համայնքի ղեկավարի 22 նոյեմբերի 2012թ.-ի «Շենավան համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 23 որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17

« 22» նոյեմբերի 2016թ.

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ.-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Շենավան համայնքի ավագանու 22.11.2016թ.-ի թիվ 21-Ն որոշումը,

Ո ր ո շ ու մ եմ՝

Հաստատել Շենավան համայնքի 2017թ.-ի տարեկան բյուջեի եկամուտների և ծախսերի բաշխումը ըստ եռամսյակների՝ համաձայն հավելվածների:

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան